

**Համաձայնագիր
«Թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների
նմուշների հանձնման կարգի մասին»**

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

գիտակցելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառությունն եւ դրանց չարաշահումը լուրջ վտանգ են ներկայացնում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների ազգային անվտանգությանը, ժողովրդի առողջությանը եւ բարեկեցությանը,

եղնելով Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգի մասին 2000 թվականի նոյեմբերի 30-ի Համաձայնագրի եւ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության հակազդման Հայեցակարգի նպատակներից,

ընդունելով, որ թմրամիջոցների, հոգեմետ նյութերի, եւ դրանց պրեկուրսորների անօրինական շրջանառության դեմ արդյունավետ հակազդեցությունը պահանջում է Կողմերի տեղեկատվական համագործակցության ամրապնդում,

դեկլարավելով միջազգային իրավունքի համընդհանուր սկզբունքներով եւ նորմերով,

համաձայնվեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրի առարկան է հանդիսանում անօրինական շրջանառությունից առգրավված թմրամիջոցների, հոգեմետ նյութերի /այսուհետ՝ թմրանյութ/, եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնման կարգը՝ իրակացնելու համար օպերատիվ-հետախուզական միջոցառումներ, ապահովելու համեմատական քրեագիտական հետաքննության անցկացում, ինչպես նաեւ գիտական եւ ուսումնական նպատակներով:

Հոդված 2

Կողմերի իրավասու մարմինները կարող են իրականացնել օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հետաքննության, քննչական գործողությունների ընթացքում առգրավված, ինչպես նաև այլ ճանապարհով ձեռք բերված թմրանյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների հանձնում:

Կողմերից յուրաքանչյուրը սույն Համաձայնագրի՝ իր համար ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 30 օրում որոշում է իրավասու մարմինների ցանկն, որոնց վրա կդրվեն դրա իրականացումն, եւ այդ մասին կձանուցի ավանդապահին:

Սույն Համաձայնագրի կատարման նպատակներից ելնելով Կողմերի իրավասու մարմինները համագործակցում են միմյանց հետ անմիջականորեն, ինչպես նաև դիվանագիտական ուղիներով՝ նամակագրության փոխանակման ճանապարհով:

Հոդված 3

Կողմերի իրավասու մարմինների կողմից թմրանյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների փոխանակումն իրականացվում է սույն Համաձայնագրի 1-ին հավելվածի համաձայն:

Թմրանյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը սույն Համաձայնագրի մասնակից-պետությունների պետական /մաքսային/ սահմանների վրայով, ինչպես նաև սույն Համաձայնագրի մասնակից-պետությունների տարածքում տարանցիկ տեղափոխումն իրականացվում է առաջնահերթության /առաջնության/ կարգով: Ընդ որում որպես մաքսային հայտարարագիր կարող են գործածվել տրանսպորտային/փոխադրական/, առետրային եւ /կամ/ այլ փաստաթղթեր պայմանով, որ մաքսային մարմիններին տրամադրվող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների հաշվառման Քարտերը ձեւակերպված լինեն սույն Համաձայնագրի 2-րդ եւ 3-րդ հավելվածներին համապատասխան:

Տեղափոխվող թմրանյութերն եւ դրանց պրեկուրսորների նմուշներն ազատվում են մաքսային զննությունից պայմանով, որ պահպանված լինեն սույն Համաձայնագրի 1-ին հավելվածով նախատեսված դրույթները:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է միջոցներ ձեռնարկել պետական հսկողության ներքո թմրանյութերի եւ դրանց պրեկուրսորների նմուշների տեղափոխումը պարզեցնելու համար:

Հոդված 4

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունն իրականացվում է Կողմերի իրավասու մարմինների կողմից աջակցություն ցուցաբերելու՝ հարցումների հիման վրա /այսուհետ՝ հարցում/ :

Հարցումն ուղարկվում է գրավոր ձևով եւ պետք է ներառի.

ա/հարցնող եւ հարցվող Կողմերի իրավասու մարմինների անվանումները,

բ/ գործի բուն նյութի շարադրումը,

գ/ հարցման նպատակն ու հիմնավորումը,

դ/ հարցվող աջակցության բովանդակությունը,

ե/ հարցման կատարման ժամկետը:

Կողմերը կարող են տրամադրել լրացուցիչ տեղեկատվություն, որոնք կարող են օգտակար լինել հարցման կատարման համար:

Հարցումը ստորագրվում է իրավասու մարմնի ղեկավարի կամ նրա տեղակալի կողմից եւ վավերացվում է զինանշանի պատկերով կնիքով:

Հոդված 5

Հարցվող կողմի իրավասու մարմինը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները հարցման արագ, որակյալ առավել ամբողջական կատարումն ապահովելու համար:

Հարցման կատարմանը խոչընդոտող կամ կատարումը զգալիորեն հետաձգող հանգամանքների ի հայտ գալու դեպքում, Հարցվող Կողմը անմիջապես ծանուցում է այդ մասին Հարցնող Կողմի իրավասու մարմնին:

Եթե հարցվող Կողմի իրավասու մարմինը համարում է, որ հարցման կատարումը կարող է խոչընդոտ հանդիսանալ սույն Համաձայնագրի հարցվող մասնակից-պետության տարածքում իրականացվող քրեական հետապնդման կամ այլ վարույթի համար, ապա նա կարող է Հարցնող Կողմի իրավասու մարմնի հետ խորհրդակցելուց հետո հետաձգել հարցման կատարումը կամ դրա կատարումը կապել որպես անհրաժեշտ ճանաչված պայմանների պահպանման հետ:

Եթե հարցնող Կողմի իրավասու մարմինն ընդունում է հարցվող Կողմի իրավասու մարմնի աջակցությունն այդպիսի պայմաններով, ապա այդ պայմանները պետք է պահպանվեն:

Հողված 6

Հարցվող Կողմի իրավասու մարմինը կարող է խնդրանքով դիմել հարցնող Կողմի իրավասու մարմնին այն մասին, որ սույն Համաձայնագրին համապատասխան ստացված, հարցման կատարման արդյունքները չիրապարակվեն կամ գործածվեն միայն այն պայմաններով, որոնց շուրջ իրենք կայանանավորվեն: Եթե հարցնող Կողմի իրավասու մարմինը կատարված հարցման արդյունքներն ընդունում է այդպիսի պայմաններով, ապա պետք է պահպանի այդ պայմանները:

Սույն Համաձայնագրի դրույթները չեն բացառում կատարված հարցման արդյունքների գործածումն այլ նպատակների համար, եթե սույն Համաձայնագրով հարցվող մասնակից-պետության ազգային օրենսդրությամբ նախատեսված է գործել նման կերպ: Այդ դեպքում հարցնող Կողմի իրավասու մարմինը հարցման մեջ պարտադիր տեղեկացնում է հարցվող Կողմի իրավասու մարմնին կատարված հարցման արդյունքների այդպիսի հնարավոր կամ ենթադրվող գործածման կամ հրապարակման մասին:

Հարցվող Կողմի իրավասու մարմինն իրավունք ունի մերժել հարցնող Կողմի իրավասու մարմնի խնդրանքը՝ գործածելու կատարված հարցման արդյունքները՝ հարցման մեջ չնշված նպատակով:

Հողված 7

Սույն Համաձայնագրի շրջանակներում աջակցության ցուցաբերումը կարող է մերժվել անբողջությամբ կամ մասնակի, եթե հարցվող Կողմը համարում է, որ հարցման կատարումը կարող է վնաս հասցնել իր պետական շահերին կամ հակասում է ազգային օրենսդրությանը:

Հարցման կատարման համար մերժման որոշում ընդունելու դեպքում Հարցնող Կողմի իրավասու մարմինը մերժման պատճառների մասին գրավոր ծանուցվում է ոչ ուշ, քան 30 օրում:

Եթե հարցումը կատարելու աջակցություն ցուցաբերելը չի մտնում հարցումը ստացող մարմնի իրավասության մեջ, ապա տվյալ մարմինն անմիջապես փոխանցում է այն հարցվող Կողմի համապատասխան իրավասու մարմնին եւ այդ մասին տեղեկացնում է հարցնող Կողմի իրավասու մարմնին:

Անիրաժեշտության դեպքում հարցվող Կողմի իրավասու մարմնին իրավունք ունի հարցնել /պահանջել/ լրացուցիչ տեղեկատվություն

հարցնող Կողմի իրավասու մարմնից, որոնք իր կարծիքով անհրաժեշտ են հարցման կատարման համար:

Հոդված 8

Կողմերն ինքնուրույն են կրում սույն Համաձայնագրի դրույթների կատարման ընթացքում ծագած բոլոր ծախսերն, եթե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում այլ կարգ չի համաձայնեցվում:

Կողմերը կարող են անհրաժեշտության դեպքում միմյանց ցուցաբերեն անհատույց օգնություն՝ սույն Համաձայնագրի իրականացման նպատակներից ելնելով:

Հոդված 9

Կողմերի իրավասու մարմինները համագործակցության կատարման ընթացքում որպես աշխատանքային լեզու կիրառում են ռուսերեն լեզուն:

Հոդված 10

Սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման կամ կատարման հետ կապված ցանկացած տարաձայնություն լուծվում է շահագրգիռ Կողմերի միջև խորհրդատվության կամ բանակցությունների անցկացման միջոցով կամ Կողմերի կողմից համաձայնեցված այլ ընթացակարգի միջոցով:

Հոդված 11

Սույն Համաձայնագիրը չի շոշափում սույն Համաձայնագրի մասնակից-պետություններից յուրաքանչյուրի այլ միջազգային պայմանագրերից բխող՝ այդ թվում նաև քրեական գործերով, իրավական օգնության իրավունքներն ու պարտականություններն, որոնց մասնակիցներն են հանդիսանում նրանք:

Հոդված 12

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին Կողմերի կողմից ստորագրված երրորդ գրավոր ծանուցումն ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Անհրաժեշտ ներպետական ընթացակարգն ուժ անցած Կողմի համար Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում համապատասխան ծանուցումն ավանդապահին հանձնելու օրվանից:

Հոդված 13

Սույն Համաձայնագրում փոխադարձ համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեռակերպվում են համապատասխան արարողակարգով:

Հոդված 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է անորոշ ժամկետով:

Կողմերից յուրաքանչյուրը կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու ժամկետից ոչ պակաս քան վեց ամիս առաջ այդ մասին գրավոր ծանուցում ուղարկելով ավանդապահին՝ կարգավորելով սույն Համաձայնագրի գործողության ժամանակ ծագած պարտավորությունները:

Հոդված 15

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո բաց է իր նպատակներն եւ սկզբունքները կիսող ցանկացած պետության համար՝ միանալու իրեն, միանալու մասին փաստաթուղթն ավանդապահին հանձնելու միջոցով:

Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից-պետությունների համար սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից միանալու մասին փաստաթուղթը ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Այն պետությունների համար, որոնք չեն հանդիսանում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից, սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ավանդապահի կողմից բոլոր իր ստորագրած կամ իրեն միացած բոլոր պետությունների միացման վերջին ծանուցումը ստանալու օրվանից 30 օրը լրանալուց հետո:

Կատարված է----- քաղաքում, ռուսերեն լեզվով մեկ բնօրինակից: Բնօրինակը պահվում է ԱՊՀ Գործադիր կոմիտեում, որն էլ սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված կրկնօրինակը:

**Ադրբեջանական Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Հայաստանի Հանրապետության
ռատիկանության կողմից**

Բելառուսի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Ղազախստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Ղրղզստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Մոլդովայի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Ռուսաստանի Դաշնության
ներքին գործերի նախարարության կողմից
Տաջիկստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Թուրքմենստանի
ներքին գործերի նախարարության կողմից
Ուզբեկստանի Հանրապետության
ներքին գործերի նախարարության կողմից
Ուկրաինայի
ներքին գործերի նախարարության կողմից